

ԱՐՇԱԿ ՖԷԹՎԱՃԵԱՆ ԵՒ Ն. ԱԼԻՇԱՆ

Վերին Ա. Թեթվաճեանի մահը արձա-
նագրուեցաւ մեծ կսկիծով Ամերիկայի
և ուրիշ գաղութաձայ լրագիրներու մէջ:

Այդ կսկծալի մահը տեղի ունեցած է ան-
ցեալ տարի Հոկտ. 7-ին, երեքշաբթի օ-
րուան առաւօտը Մէտֆըրտ՝ հանգստեան
տան մէջ, ուր երեք ամիսէ ի վեր փոխա-
դրուած էր քաղցկեղի ծանր հիւանդութեան
մը վերայայնումով իր մէջ:

Նկարիչ ու բանասեր Արշակ Ֆեթվահեան
իր մահկանացուն կը կնքէր 84-ամեայ հա-
սակին, ամրողջ կեանքովը նուիրուած ծա-
ռայելու հայրենիքին՝ նկարչական մարզին
մէջ:

«Բազմավէպ»ի այս սիւնակներու մէջ վե-
րականդանացիներով իր յիշատակը և դնելով
իր անունը Աւիշանի անունին դիմաց, մենք
կ'ուզենք շեշտել թէ Ֆէթվաճեան մեծապէս
ազդուած է Աւիշանէն: Այս կէտը ինքնին
պիտի լուսարանուի երբ խօսինք իր յարա-
բերութիւններու մասին մեծ բանասէր,
հնախօս-պատմաբան ու բանաստեղծ Աւի-
շանի հետ:

Ա. Ֆեթվաճեան ծնունդով Տրապիզոնցի (1 Հոկտ. 1863), տաանըվեց տարեկան հասակին կ'անցնէի Պոլիս, և հոն կ'աշակերտի Գեղարուեստից կայսերական վարժարանը, բայց իր զարգացումը տակաւին կատարելութեան պէտք ունէր: Կ'առաջարկուի իրեն թուրք կրթական նախարարութեան կողմէն պետական ծախսով անցնիլ Հռոմ ու շարունակել իր ուսումները և վերադառնալով Պոլիս՝ ստանձնել պաշտօններ թրքական կառավարութեան սահմաններուն մէջ: Առաջարկը չի գործադրուիր: Ֆեթվաճեան սակայն հարուստ ազգայինի մը օգնութեամբ կը յաճողի անցնիլ Հռոմ ու Գեղարուեստից բարձրագոյն ճեմարանին մէջ կատարելագործել իր նկարչութեան արուեստը՝ ստա-

Նախով չորս տարիէն ձեմարանի վկայականը: Ճոխացնելու համար իր մտքի պաշարը կը ճամբորդէ Եւրոպայի զանազան արուեստի կեդրոնները, Վիեննա, Պերլին, Վենետիկ, որուն հանդէպ սքանչացում ունի, և որ կը դառնայ իր ճամբորդութեանց ամէնէն կարեւոր կայանը: Երիտասարդ նկարիչ, լի եռանդով արտադրելու, սակայն կը պակսէր անոր ուղղութիւնը, ծրագրիր: Ս. Ղազարու վանքը կատարած մէկ այցելութիւնը և Հ. Ալիշանի հետ ունեցած շփումը՝ հիմը կը դնէ իր ապագայ նկարչական գործունէութեան:

Եթէ Ֆէթվաձեան եղած է սիրահար նկարիչ մը հայկական յուշարձաններու, պատմական յիշատակներու, սիրահար ձեռագրական արուեստի, նկարներու արտատըպումներուն՝ այդ կը պարտի Ալիշանին որ դրոշմած է անոր երիտասարդ ու խանդավառ հոգւոյն մէջ՝ սէրը զէպի հայկական Հին արժէքները, կիսաւեր և կամ՝ փլած յիշատակարանները, ճարտարապետական կոթողները:

1888-ին է որ նա ոտք կը դնէ Ս. Ղազարու հողին վրայ: Աւիշան կ'ընդունի զինքը հայրական սիրով և իր ջերմ հայրենասիրութենէն ուժեղ կայծ մը կը փոխանցէ այդ հոգւոյն մէջ, որ Յէթվաճեանինն էր, պատրաստ ընդունելու գեղեցիկ ներշնչումները: Աւիշան անոր գեղարուեստասէրի աչքին առջեւ կը պարզէ ձեռագրական մեր գեղեցկութիւնները: Երիտասարդ նկարչին աչքերը կը շլանան: Աւիշան կը շարունակէ ներշնչել այն հաւատքով և համոզումով՝ որ նա օր մը կը նուիրուի անպատճառ հայ հին գրչագիրներու գեղարուեստին ուսումնասիրութեան: Աւիշան կը թելադրէ կատարել մէկ քանի արտանկարումներ գրչագիրներու մանրանկարներէն. երիտասարդը տեսնելով

Ժերուհի բանասէր Հօր Հոգեկան խանդավառութիւնը, անզուսպ փափաքը, կը զննէ ինքզինքը անոր տրամադրութեան տակ, ու քսանէն երեսուն նկարներ կը գծէ անոր նախասիրածներէն:

Ալեշան աղնիւ մտածութեամբ դրամական կերպով կը փորձէ նպաստել երիտասարդին կատարած աշխատութեանց փոխարէն. նա կը մերժէ ընդունիլ: Ֆէթվաճեան Ալեշանի հանդէպ հիացմունք ունի, իր կատարած աշխատութեանց փոխարէն միակ խնդրանք մ'ունի անկէ. նստիլ իր դիմացը և թոյլ տալ որ դիմանկարը գծէ: Ալեշան չի մերժեր խնդրանքը. Ֆէթվաճեան 1891-ի գարնան վերջ՝ երբ այլեւս պիտի թողուր Խտալիան, կու գայ անգամ մ'ալ Ս. Ղազարու կը մտնէ մեծ բանաստեղծին և մեծ հայրենասէրին սենեակը ու կը գծէ անոր նկարը. Ֆէթվաճեան իր իսկ բառերով կ'ըսէ. «Լւր սենեակի մէջ նկարեցի անմոռանալի մեծ մարդու դիմապատկերը»:

Երիտասարդ նկարիչը իր հոգեկան գոհունակութիւնը գտած է: 1895 ին այդ նկարը կը յանձնէ Վիեննայի պարտից Շահի դեսպանին. այնուհետեւ կը կորսուի ատեն մը այդ պատկերին հետքը, ինչպէս իր նամակին մէջ, զոր խմբագրութեանս ուղղած է իր մահէն երկու ամիս առաջ, կը նկարագրէ կենդանի ոճով կորուստը և զիւտը: Այդ նամակը ստորեւ պիտի հրատարակենք:

Ինչպէս տեսնուեցաւ Ֆէթվահեանի այցելած արուեստի կեդրոններէն ամէնէն յատկանշականը կ'ըլլայ Վենետիկ, մանաւանդ Ս. Ղազար և հոն ունեցած մշակութային իր շրջամբ Հ. Աւիշանի հետ:

Այլևս Ֆէթվահեան նկարիչը գտած է իր հունը, ապագայի բանասեր-նկարիչը, հայրենի ճարտարապետական յիշատակներու ուսումնասէր նկարիչը չի փնտռեր ան-գիտակից նորեկի պէս իր ասպարէզը : 1900էն սկսեալ իր ճամբորդութիւնը արեւ-ւելեան Հայաստանի քաղաքները՝ ծրար գրուած ուղեւորութիւն մըն է, հաւաքելու ատաղձ իր կատարելիք արժէքաւոր աշխա-

տանքներուն։ Ամբողջ քսան տարի կը շրջի
գիտնականի պէս հայրենի աւերակներու
վրայ, իր աչքերով կը տեսնէ փլած եկեղեցի-
քները, վանքերը, ամրոցները, թուղթին
կը յանձնէ անոնց ուրուագիծը՝ երբ տեղ-
ւոյն վրայ չի յաւոյրի ամբողջական նկարը
մէկէն արտագրել, կը ժողվէ նիւթը, կը
ներշնչուի երկիւղածօրէն ինկած մէն մի
քարի, մէն մի յիշատակորանի առջեւ։
Զինքը կը հմայեն Անիի կոթողային շի-
նուածքներու աւերակները, տաճարները,
պալատները։ Այդ ամբողջ ատաղձէն դուրս
եկած են երկուհազար նկարներ հայ ճար-
տարապետական ու հնախօսական, շինուա-
ծական գեղեկութիւնները և հնութիւնները
պատկերացնող, իբրեւ վկայութիւն և իբրեւ
դանձարան հին ազգային արժէքներու, ու
րոնք ստուգելու անսահման կարեւորութիւն
ունեցող աշխատանքներ են։

Բացի այս կարգի գործերէն Ֆեթվածեան
ունի նաեւ ազգային հին գէմքերու գիմա-
նկարներ, ներշնչուած մանրանկարչութենէն
և կամ մեծ մասամբ յղացուած իրմէ։ Այս-
պէս են իր Ս. Սահակը, Ս. Մեսրոպը,
Մովսէս Խորենացին, Ղազար Փարպեցին,
Մտրիկը, Մխիթար Գոշը, և այլն։ Այս
Աստղիկի նկարներուն քիչէները և զոր մենք
Աստղիկի նկարներուն քիչէները և զոր մենք
հրատարակեցինք մեր 1947-ի Գեղունիին
մէջ։

Իր կեանքին վերջին 25 տարիները անցուցած է Պոսթոն , առանձնացած ինքնիր մեջ և նուիրուած իր ուսումնասիրուած թիւններուն , իր նկարչական զբաղանքներուն : Այնքանով աշխատող մը , որ երբեք ուզած չէ ցրուիլ արտաքին գործերով , որպէս իր մտադրած ծրագիրը ամբողջացնէ :

Ֆեթվաճեանի համար կ'ըսուի սովորաբար քանասեր: Աւելանէն ժառանգած է այդ սէրն ալ, և որ միանգամայն բնական հետեանք է իր կատարած պրպտութիւններուն և ուսումնասիրութիւններուն Հայաստանի հրախօսական արժեքներուն վրայ:

Այս ուղղութեամբ կատարուած աշխատութիւնները կը մնան անտիպ։ Ատոնք են. փորձ հայ ձարտարապետութեան պատմութեան, Հայ գրքի գեղարուեստը, Հայ ասեղնագործութեան և հայ ազգի դասակարգերու հանդերձաւորման ձեւերը և պատմականը։

Այս ձեռագիր երկասիրութիւնները, ինչպէս նաեւ երկու հազար նկարները հայ պալատներու, եկեղեցիներու, բերդերու, հին ազգային ճարտարապետութեան վերարտադրութիւնը և հայ հին հեղինակներու գիւմանկարները ամբողջապէս՝ նուիրուած են Հայաստանի Պետական Թանգարանին։ Այնքան զօրաւոր էր իր մէջ հայրենասիրութիւնը, որ հակառակ ութսունամեայ իր հասակին Հայաստան երթալու իր կատարած դիմումին պատասխանը ընդունած չըլլալուն, և հակառակ նկարները և բանասիրական աշխատանքները հայրենի թանգարանին նուիրելու իր ինքնաբերաբար յայտնած փափաքին ոչ մէկ պատասխան առած ըլլալուն, ան դարձեալ սիրայօժար նուիրած է իր երկարամեայ մտաւորական անդուլ շանքերուն պտուղը Հայաստանի՝ որուն սիրովը կը տոյրէր օտարութեան մէջ։

Ֆէթվաճեանի մահով հայ նկարչութիւնը կը կորսնցնէր ուրիշ կարեւոր վարպետ մ'ալ, ինչպէս անոր մահէն քանի մը ամիս առաջ էտկար Շահին, Կարապետ Աղամեան, Սարգիս Խաչատուրեան նկարիչները։

Կովկասի, Եւրոպայի և Ամերիկայի նշանաւոր կեդրոններուն մէջ տուած է ցուցահանդէսներ, Թիֆլիս, Պաթում, Լոնտրա, Փարիզ, Պոսթոն, Նիւ Եորք, Չիքագոյ, մասնազէտ քննադատներու կողմէն արժանանալով միշտ գնահատանքներու։ 1920-ին Փարիզի մէջ իր տուած ցուցահանդէսը «Ար Տէքօրաթիֆ» ի Սրահին մէջ հովանաւորուած էր նշանաւոր բիւզանդագէտ Շարլ Տիլէն. այդ առթիւ Ֆէթվաճեան Հայաստանի հնադարեան յուշարձաններէն ներշնչուած իր 2000 նկարները կը ցուցադրէր ի հիացումն արեւելասէրներու և արուեստագէտ հնախօսներու։

Ան սիրող և պաշտող հին արուեստը, դասականները, իտալական վերածնունդի մեծ հեղինակները՝ չէր կրնար հանդուրժել արդի նկարչութիւնը, զոր կը համարէր իսկական անկում։ Տեղն է յիշատակել հոս իր սրամիտ ու զուարճախօս մէկ յայտարարութիւնը՝ խօսելով իր մտերիմ բարեկամներէն՝ երիտասարդ արուեստագէտի մը հետ. «Դուն, տղաս, Հարրիս, դուն պէտք է Հոմը տեսնես, որպէս զի իմանաս աշխարհի մեծութեան զաղանիքը։ Հապա ի՞նչ կը խորհիս, դու, կը խորհիս որ կարգ մը մօտերնիստներ արուեստի ներկայացուցիչներ են։ Չէ, կը ներես, Հոմը պաշխա է։ Դուն մի նայիր այդ կարգի մօտերնիստներուն, որոնք պարզ գծադրութիւն անգամ չեն գիտեր, դու քու ճամբագ շարունակէ»։ (Հայրենիք օրագիր, Հոկտ. 24, 1947)։


Կ'արժէ հիմա որ հրատարակենք հոս Խաչատուրեանի ուղղած իր նամակը անցեալ տարի 8 Օգոստոսին։ Գեղունիի պատրաստութեան առթիւ էր որ մենք դիմած էինք նաեւ իրեն՝ խնդրելով իր ալ մասնակցութիւնը մեր բարեկամ Տոքտ. Գասպար Կարոյեանի միջոցաւ։ Մեր դիմումին ան կը պատասխանէր շատ գեղեցիկ նամակով մը՝ շեշտելով գլխաւորապէս երկու հարց. առաջին՝ իր կապը և յարաբերութիւնը Ալիշանի հետ, և երկրորդ՝ Ալիշանի նկարին ճակատագիրը, կորուստը և գիւտը։

8 Օգոստոս 1947.

Վեր. և սիրելի Հ. Խոնրազրապետ
«Բազմալիպ» հանդեսի (1)

Թոշակաւեւ աւիսներ առաջ Բոստոնում
Չերդ և իմ բարեկամ Տոքտ. Կարոյեանից
խնայել էի Ս. Դազարոս Ուիտիյ Միարա-

1. Առանց ո՛ր և է հսկում կը հրատարակենք այս նամակը, զրուած 84-ամեայ ծերունիէ մը, որ կը մոռնայ երբեմն ամբողջացնել նախադասութիւնը և կը կրկնէ բառերը։



Հ. Գ. ԱԼԻՇԱՆ

